

Բանավոր փուլի հարցադրումներ

1. Բնութագրել Հայաստանի սահմանները և աշխարհագրական դիրքը
2. Հայաստան, Հայք և Արմենիա անվանումների մասին
3. Հայաստան անվան երկու իմաստները
4. Հայաստանը հնագույն քարտեզներում
5. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի բնօրրան
6. Հայաստանի աշխարհագրական գլխավոր առանձնահատկությունները
7. Հայկական լեռնաշխարհի բնական պայմանների գլխավոր առանձնահատկությունները
8. Հայաստանի վարչատարածքային բաժանումները
9. Ինչու՞ են պետական տարածքը բաժանում վարչատարածքային միավորների: Ինչու՞ է այն ժամանակի ընթացքում ենթարկվում փոփոխությունների
10. Ինչպիսի՞ն է ՀՀ ներկա վարչատարածքային կառուցվածքը: Որո՞ք են դրա առաջին և երկրորդ կարգի բաժանումները
11. ՀՀ վարչատարածքային ներկա բաժանման քո առաջարկվող սխեման
12. Հայաստանի պատմական <<Աշխարհներն>> ու գավառները
13. Ի՞նչ է քեզ հայտնի Վասպուրական աշխարհի մասին
14. Ի՞նչ է քեզ հայտնի Տուրուբերան աշխարհի մասին
15. Ի՞նչ է քեզ հայտնի Այրարատյան աշխարհի մասին
16. Հայաստանի մայրաքաղաքները
17. Մայրաքաղաք Երևանը
18. Հայաստանի աշխարհագրական հետազոտությունները
19. Հայաստանը Ալպ-Հիմալայան լեռնային գոտում
20. Հայկական լեռնաշխարհը որպես <<լեռնային երկիր>>, դրա գլխավոր առանձնահատկությունները
21. Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում
22. Հայկական լեռնաշխարհի հրաբուխները
23. Հրաբուխների դերը Հայկական լեռնաշխարհում
24. Հրաբուխների դերը Հայկական լեռնաշխարհի մակերևույթի ձևավորման գործում
25. Հայկական լեռնաշխարհի մակերևույթը
26. Հայկական լեռնաշխարհի ծալքաբեկորավոր լեռները
27. Մարտիասարը
28. Հայկական բարձրավանդակ /Միջնաշխարհ/
29. Մասիս լեռը
30. Ովքե՞ր են բարձրացել Մասիսի գագաթը
31. Հաշվել Մասիսի և Միսի բարձրությունների տարբերությունը
32. Հաշվել ջերմաստիճանի տարբերությունը Մասիսի և Միսի լեռնագագաթներում
33. Հաշվել ճնշումների տարբերությունը Մասիսի և Միսի լեռնագագաթներում
34. Ի՞նչ օրինաչափություններ են հայտնաբերել գիտնականները Մասիս լեռը բարձրանալիս
35. Բյուրակն լեռնագանգված

36. Միփան լեռը
37. Թոնդրակ լեռը
38. Միջլեռնային գոգավորություններ՝ դաշտեր
39. Հայկական լեռնաշխարհի օգտակար հանածոները
40. Ինչո՞վ է բացատրվում Հայկական լեռնաշխարհի շինանյութերով բացառիկ հարուստ լինելը
41. Ինչպե՞ս են գոյացել մետաղային օգտակար հանածոները
42. Հայկական լեռնաշխարհի կլիման
43. Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա ազդող գլխավոր գործոնները
44. Հայկական լեռնաշխարհի մթնոլորտի շրջանառության առանձնահատկությունները
45. Հայկական լեռնաշխարհի ռելիեֆի դերը կլիմայի ձևավորման գործում
46. Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի դերը կլիմայի ձևավորման գործում
47. Որոշել Միփան լեռան գագաթին օդի ջերմաստիճանը, եթե նույն պահին Վանա լճի ափին /1800մ-ի վրա/ օդի ջերմաստիճանը 8,2⁰ է
48. Որոշել Մասիս լեռան գագաթին օդի ջերմաստիճանը, եթե նույն պահին Արարատյան դաշտում /800մ-ի վրա/ օդի ջերմաստիճանը 22⁰ է
49. Որոշել Միս լեռան գագաթին օդի ջերմաստիճանը, եթե նույն պահին Արարատյան դաշտում /800մ-ի վրա/ օդի ջերմաստիճանը 18⁰ է
50. Ի՞նչ է ագրոկլիմայագիտությունը: Ո՞ր վնասաբեր երևույթներն են բնորոշ Հայաստանին
51. Հայկական լեռնաշխարհի գետերը
52. Հայկական լեռնաշխարհի՝ դրախտի չորս գետերը
53. Արաքս գետ
54. Հայկական լեռնաշխարհի լճերը
55. Վանա լիճ
56. Ուրմիա լիճ
57. Սևանա լիճ
58. Սևանա լճի էկոլոգիական և տնտեսական նշանակությունը
59. Սևանա լճի բնապահպանական ձեր առաջարկվող մոդելը
60. ՀՀ արտեզյան ավազանները
61. Հայկական լեռնաշխարհի աղի լճերը: Համեմատել օվկիանոսի աղիության հետ
62. Հայկական լեռնաշխարհի աղբյուրները
63. Հայկական լեռնաշխարհի հողերը
64. Հայկական լեռնաշխարհի բուսականությունը
65. Մշակաբույսերը, որոնց նախնիների հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է
66. Հայկական լեռնաշխարհի էնդեմիկ բույսերը
67. Բնութագրել և գնահատել Հայաստանի անտառների նշանակությունը
68. Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը
69. Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները
70. Լանդշաֆտային ո՞ր գոտին ավելի մեծ տարածում ունի եզրային լեռնաշղթաներում, ո՞րը Միջնաշխարհում և ինչու՞

71. Բնակչության զանգվածային գաղթերը Հայկական լեռնաշխարհից
72. Հայկական սփյուռքի աշխարհագրություն
73. Ի՞նչ է նշանակում <<Մեկ հայրենիք, մեկ ազգ>> կարգախոսը, մեկնաբանել
74. Հայկական սփյուռքը և հայկական մշակույթը
75. Սփյուռքահայության միասնականության համազգային կազմակերպությունները
76. Վենետիկի Մխիթարյան միաբանության դերը Հայաստանի աշխարհագրական ուսումնասիրության բնագավառում
77. ՀՀ հատուկ պահպանվող տարածքները
78. ՀՀ կարմիր գրքերը
79. ՀՀ բնական հուշարձանները
80. ՀՀ մարդաստեղծ հուշարձանները
81. ՀՀ զբոսաշրջությունը
82. ՀՀ բնապահպանական հիմնախնդիրներն ըստ մարզերի ու Երևան քաղաքի
83. ՀՀ հանգստի ու զբոսաշրջային հնարավորություններն ըստ մարզերի ու Երևան քաղաքի /ԼՂՀ-ն ևս/

Ի՞նչ կլինի, եթե...

1. Փոխվի Հայաստանի քաղաքաաշխարհագրական դիրքը
2. Հայաստանը լիներ հարթավայրային երկիր
3. ՀՀ-ն ելք ստանա դեպի Սև ծով
4. Նավթ հայտնաբերվի ՀՀ-ում
5. Բացվի ՀՀ սահմանը Թուրքիայի հետ
6. Բարձրանա Հայաստանի միջին ջերմաստիճանը
7. Հայաստանի կլիմայի խոնավությունն ավելանա
8. Մեծանա ներգաղթը դեպի Հայաստան
9. Ավելանա ջրամբարների քանակը Հայաստանում
10. Մեծանա զբոսաշրջիկների հոսքը դեպի Հայաստան
11. Մեծանա ՀՀ տարածքի յուրացվածության աստիճանը
12. Բարձրանա Սևանա լճի մակարդակը
13. Փոխվի ՀՀ մթնոլորտային շրջանառության ընդհանուր սխեման
14. Կառուցվի Հայաստան-Իրան երկաթգիծը